ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հոկտեմբերի 2025 թվականի № 419-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի № 2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների 1-ին մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի և 3-րդ մասի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2003 թվականի հունվարի 16-ի *«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները հաստատելու մասին»* № 2 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Առինջի Կ. Ծառուկյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) կանոնադրության 21-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«21. Դպրոց, ըստ կրթական մակարդակների, իրականացնում է 1-ին (1-4-րդ դասարաններ), 2-րդ (5-9-րդ դասարաններ), 3-րդ (10-12-րդ դասարաններ) աստիճանի հանրակրթական և նախադպրոցական կրթական ծրագրեր»:

2. Հաստատել կազմակերպության կանոնադրության փոփոխությունը:

3. Հանձնարարել կազմակերպության տնօրենին անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ կանոնադրության մեջ կատարած փոփոխությունը գրանցելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ԽԱՉԱԿՅԱՆ**

2025 թվականի հոկտեմբերի 17
ք. Հրազդան